փոքրիկ բարձրութիւններ, որոնց իւրաքանչիւրի գագաթի վրայ մի-մի երդիկ էր բացուած՝ թէ լոյս ընդունելու եւ թէ վառելու ժամանակ ներսից ծուխ դուրս տալու համար: Բայց երբ ներս մտանք, առաջին սենեակը, որ բացոեցաւ մեր առջեւ, իր մեծութեամբ կարելի էր այդ ստորերկրեայ բնակարանի դահլիճը համարել: Երկու կարգ փայտեայ հաստ սիւներ, վեցանկիւնի տաշուածքով, զուգահեռաբար շարուած էին միմեանց մօտ, մինչեւ դահլիճի վերջը, որ կորչում էր մթութեան մէջ: Սիւների իւրաքանչիւրի գլխին հագցրել էին նոյնպէս փայտեայ մեծ խոյակներ, որոնք կրում էին իրանց վրայ առաստաղի ահագին գերանները: Խոյակները զարդարուած էին զանազան քանդակներով, որոնց մէջ երեւում էր տեղային ատաղձագործի ճարտարութիւնը: Սիւները կանգնած էին քարէ պատոանդանների վրայ, որոնց հմուտ քարտաշը խիստ գեղեցիկ ձեւ էր տուել: Բոլոր սիւների կողքին ամրացրած էր մի-մի տախտակ, որ ձեռքի նմանութիւն ունէր, եւ նրանց վրայ ճրագներ էին դրուած: Ճրագները շինուած էին կաւից եւ աղաւնու նմանութիւն ունէին, այդ թռչունների կտուցներից դուրս ընկած պատրոյգները վառւում էին կտաւատէ ձէթով: Սենեակի այն մասը, որտեղ մեզ համար նստելու տեղ էին պատրաստել, բոլորովին լուսաւորուած էր: Բացի ճրագներից, սիւների վրայ ամրացրած փայտեայ կախաններից քարշ էին ընկած զանազան զէնքեր եւ հրացանի պարագայք, քարշ էին ընկած նաեւ փոքրիկ զամբիւղներ, որոնց մէջ տեսակ-տեսակ իրեղէններ էին լցրած: Սիւների այդ բոլոր զարդարանքները լրացնում էին դեղին եւ ծիրանեգոյն «անթառամ ծաղիկներըէ, որ մեծ փունջերով կապած էին նրանց վրայ: Այդ դահլիճից բացւում էին զանազան դռներ դէպի միւս սենեակները, որոնք նոյն ձեւով էին շինուած եւ ծառայում էին որպէս մթերանոց, որպէս ամբար, որպէս մառան, եւ որոնք լի էին ամէն տեսակ բարիքներով: Տանտիրոջ բոլոր հարստութիւնը ակներեւ էր: Միեւնոյն բնակարանից մի առանձին դուռն տանում էր դէպի խոշոր, եղջերաւոր անասունների ախոռատունը եւ դէպի ձիաների փարախը: Անասունները եւ իրանց տէրերը սերտ դրացիութեան մէջ էին ապրում:

Գետնափոր խրճիթ ասելով, ես սովոր էի երեւակայել գետնափոր խորշեր, որոնք գազանների որջից այնքանով են միայն զանազանւում, որքանով զանազանւում է կիսավայրենի մարդը գազանից: Բայց գետնափոր խրճիթը եւս ունի իր կատարելագործուած ձեւը, որի մէջ արհեստը եւ ճարտարութիւնը մեծ յառաջադիմութիւն են գործել: Մեր մտած խրճիթը այդ տեսակներիցն էր: Շինութեան ամբողջ կազմուածքի մէջ երեւում էր մեծութիւն, զօրութիւն եւ ահեղ ձեռքի ահեղ գործ: Շինութեան բոլոր պատերը կառուցել էին քարերից, բայց այդ քարերը աւելի ժայռեր էին, քան թէ քարի մանր կտորներ: Հս-